ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 Նոյեմբերի 2018թ. N 28-Ն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային Օրենսգրքի» 76-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականության 62,3761 հա վարելահողերը, 275,02 հա արոտները, 0343 հա խոտհարքը և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 496,5 հա արոտները մրցույթով վարձակալության տալու մասին և սահմանել հետևյալ մեկնարկային գները.
   1, Գյուղ. Նշանակության վարելահող 4-րդ ջրովի – 1ար հողամասի գինը սահմանել 100,0 դրամ
   2, Գյուղ նշանակության վարելահող 3-րդ անջրտի – 1ար հողամասի գինը սահմանել 50,0 դրամ
   3, Գյուղ նշանակության վարելահող 4-րդ անջրտի – 1ար հողամասի գինը սահմանել 50,0 դրամ
   4, Գյուղ. Նշանակության վարելահող 5-րդ անջրտի – 1ար հողամասի գինը սահմանել 50,0 դրամկ
   5, Գյուղ նշանակության խոտհարք - 1ար հողամասի գինը սահմանել 50 դրամ
   6, Գյուղ նշանակության արոտներ – 1ար հողամասի գինը սամանել 50,0 դրամ
2. Համայնքի ղեկավարին.
   Հանձնարարել համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրող հանձնաժողովին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթում տալ հայտարարություն մրցույթի անցկացման և սահմանված պայմանների վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

5 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
Ավագանի՝

21.11.2018

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան

Կ.Տ